

N 22 ԱՄ-ՇՀ ԱՊՁԲ-11/6-14-2

ք. Աշ տարակ

<<08>> Մայիսի 2014թ.

22 Արագածոտնի մարզպետարանը՝ ի դեմս աշխատակազմի ղեկավար Հ.Գևորգյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գևորգ), մի կողմից, և «Էլբաս» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն՝ Ե. Չախյանի (այսուհետև՝ Վաճառող), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետև կոչվեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված պարզով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գևորգին կամ նրա կողմից որոշված Մտացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ավտոպահեստամասերը (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գևորգը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրահամար:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գևորգին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագրի կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գևորգի իրավունքներն են՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից:

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը:

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գևորգը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ ողջամիտ ծախսերը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն է ակնորեն խախտել սույն պայմանագիրը:

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն է ակնհայտ, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գևորգի համար ընդունելի ժամկետում:

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Չննել Ապրանքը և հայտնաբերված թերություններին մասին նախապառնակ կացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Գատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրամային անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսակնու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը:

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրավոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերություն չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակագումարները:

3.3.4 Գնորդի համաձայնությունամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկում է հաջորդ փուլում և մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ 2.2 օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետտանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանություն ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանություն ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է՝ 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն Պայմանագրի N2 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անվանիսի՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման ընդունման արձանագրության հիման վրա N 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-րդ ցից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար

նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրամի մասի կատարման արդյունքներն ընդունում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավատից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N4):

6.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրամի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրությունն չի ստորագրվում և պատվիրատուն

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառարանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը, տուգանքը հաշվարկվում են հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագրի կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրությունն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների

ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունները կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությամբ շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

9.3 Այն դեպքում, երբ օրենսդրով նախատեսված կարգով գնումներին մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները կատարման նկատմամբ հսկողություն և (կամ) վերահսկողություն կամ բողոքները քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումներին մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առջացող վնասները կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Սույն պայմանագրում փոփոխություններ լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությունով: Նոր պայմանագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորություններին մասնակի կատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությունով: Բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումները նվազեցված դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորություններին մասնակի կատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնություն և անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումները նվազեցումը:

2) պայմանագրով նախատեսված ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման նորանց փոփոխության գնահատման կարգը սահմանվում է պայմանագրով նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

Սույն պայմանագրում չի կարող կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դորս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորություններին կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագրի կնքած անձը:

9.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցություններին միջոցով: Համաձայնություն չառնալու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.7 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2, 3 և 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չկարող
 դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցում, առանց
 կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնությունների: Սույն պայմանագրից ծագած
 պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր
 համաձայնությունների:

9.9 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գ Ե Ո Ր Դ

ՀՀ Արագածոտնի մարզպետարան
 ՀՀ Արագածոտնի մարզ ք. Աշտարակ,
 Վ. Պետրոսյան 4
 ՀՎՀՀ 05004247
 Բանկ՝ ՀՀ ֆինանսների
 նախարարության գործառնական
 վարչություն
 Հ/Հ 900441041176
 Աշխատակազմի ղեկավար


Վ. Գևորգյան
 Վ.Ս.



Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

«ԷԼԲԱՏ» ՓԲԸ
 ք. Երևան, Շարուրի 37/29
 «Ամերիա բանկ» ՓԲԸ
 Հ/Հ 1570005215160100
 ՀՎՀՀ 02242108

Գլխավոր Տնօրեն
 Վ. Էլբատյան
 /ստորագրություն/



ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

31421000	Կապարային մարտկոցներ	Կուտակիչային մարտկոց 70A
----------	----------------------	--------------------------

Մատակարարումը		Ապրանքը ինչպես նաև գնման գործընթացին վերաբերող բոլոր փաստաթղթերը ընկերության կողմից սեփական միջոցներով տեղափոխելու Հ.Հ. Արագածոտնի մարզպետարան, քստգնման ժամանակագրությամբ:
Ծանոթություն՝		Բոլոր ապրանքները լինեն նոր և չօգտագործված:

Գ Ն Ո Ր Դ

Հ.Հ. Արագածոտնի մարզպետարան
 Հ.Հ. Արագածոտնի մարզ Բ-Ա2 տարակ, 4
 Վ.Պետրոսյան
 Հ.Վ.Հ.՝ 05004247

Բանկ՝ Հ.Հ. ֆինանսների նախարարության
 գործարանակալական վարչություն
 /Հ 900441041176

Խառակազմի ղեկավար՝


Հ. Գևորգյան



Վ Ա Ճ Ա Ո Ո Ղ
 «ELFUS» ՓԲԸ
 Բ.Երևան, Շարուրի 37/29
 «Ամերիա բանկ» ՓԲԸ
 Հ/Հ 1570005215160100
 ՀՎՀՀ 02242108

Գլխավոր Տնօրեն՝

/ստորագրություն



Հավելված N 2
 ՀՀ ԱՍ-ԵՀ ԱՊՁԲ-11/6-14-2 գնման պայմանագրի
 Սալիսի 2014թ կֆքված

Գ Ն Մ Ա Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Ն Կ Ա Ց Ո Ւ Յ Ց


ՀՀ դրամ

N/4	Ապրանքի անվանումը	Մի ավորի գինը	Ըմա փման ավորը	Քանակը										Ընդամենը			
				Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Մայիս	Յունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Քանակը	Գինը	
2	Կապարային մարտիցներ	25 000	հատ	-	-	-	-	-	-	-	-	-	-	8	-	8	200 000

Գ Ն Ո Ր Ղ

ՀՀ Արագածոտնի մարզպետարան
 ՀՀ Արագածոտնի մարզ ք.Աշտարակ,
 Վ.Պետրոսյան 4
 ՀՎՀՀ, 05004247

Բանկ՝ ՀՀ ֆինանսների նախարարության
 արձարնական վարչություն
 900441041176




Հ. Գևորգյան
 Վ.Ս.

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

«ԷԼԲԱՏ» ՓԲԸ
 ք.Երևան, Շարտրի 37/29
 «Ամերիա բանկ» ՓԲԸ
 Հ/Հ 1570005215160100
 ՀՎՀՀ 02242108

Գլխավոր Տնօրեն՝

Գլխավոր Զախյան
 /Կառավարություն/



Հավելված N 3

<<08>> Մայիսի 2014թ կնքված
 N Հ Հ Ա Ս - Շ Հ Ա Պ Ձ Բ - 11/6-14-2 գնման պայմանագրի

Վ Ճ Ա Բ Մ Ա Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց


ներքոյի շաղթվերը ներկայացված են աճողական կարգով

ՀՀ դրամ

N թ/4	Ապրանքի անվանումը	Ն ա խ ա տ ե ս Վ ու մ է ֆ հ ն ա ն ս ա Վ ո ռ է լ 2014 թ . ք ս տ ա մ հ ս ն է թ հ ր ն դ ո ռ ու մ										Ը նդ ա մ ն ը				
		Հումկար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր		Նոյեմբեր	Դեկտեմբեր		
2	Կապարային մարտկոցներ	-	-	-	-	-	-	-	-	200 000	200 000	200 000	200 000	200 000	200 000	200 000

Գ Ն Ա Դ Դ

Հ Հ Ար ա գ ա ճ ո տ ն ի մ ա ր գ ա լ է տ ա ր ա ն
 Հ Հ Ար ա գ ա ճ ո տ ն ի մ ա ր գ ֆ . Ա 2 տ ա ր ա կ ,
 Վ . Պ ե տ ր ո ս յ ա ն 4
 Հ Վ Հ Հ 05004247
 Բ ա ն կ , Հ Հ Ֆ հ ն ա ն ս ե ե թ հ ն ա խ ա ր ա ր ո թ յ ա ն
 Բ ա ն կ , Հ Հ Ֆ հ ն ա ն ս ե ե թ հ ն ա խ ա ր ա ր ո թ յ ու ն
 900441041176
 Կ ա տ ա կ ա գ մ Ի ղ է կ ա Վ ա ր




Հ . Գ ն ո թ զ յ ա ն

Ի Ա Վ Ա Ա Ո Ղ

«ELFUS» ՓԲԸ
 ք . Երևան , Շաբուրի 37/29
 «Ամերիա Բանկ» ՓԲԸ
 Հ/Հ 1570005215160100
 ՀՎՀՀ 02242108

Գլխավոր Տնօրեն

/ստորագրություն



Կատարող _____ _____ գտնվելու վայրը _____ հհ _____ _____ հվհհ _____	Պատվիրատու _____ _____ գտնվելու վայրը _____ հհ _____ _____ հվհհ _____
--	---

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
 ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՄՍԱՆ**

« _____ » « _____ » 20 թ.
 Պայմանագրի անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « _____ » « _____ » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ ի դեմս _____ և

Կատարողը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով, որ պայմանագրով

նախատեսված ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցի՝ սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը _____ 20__ թ-ից _____ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Աշխատանքը ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Կ.Տ.